

ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Ասագ

Այս բառը հանդիպում է միայն Երեմիա Մեղրեցու բառարանում՝ կամ և կոփաւր կապակցութեան մեկնութեան մեջ «ասագ, կամ տուգ և տուգանք» ձևով։ Հ. Աճառյանը սրա հիման վրա տալիս է, թեև հարցականով, «տուգանք» մեկնությունը։ Երեմիա Մեղրեցու բառարանի համար հիմք ծառայած ձեռագրերի քննական տեքստը կազմող Հ. Ամալյանը ճիշտ կերպով ասագ-ը նույնացնում է ասախ (եսասխ)՝ բառի հետ. վերջինս Հ. Աճառյանը մեկնում է «օրենք» և, հենվելով Լ. Զ. Բուդաղովի «Թյուրք-թաթարական բարբառների բառարանի» վրա, նշում թյուրքական աղբյուր. հմմտ. թրք. yasak «օրենք. արգելք», մոնղ. дзасаг «օրենք». սակայն թյուրքական և սրանց հետ կապված մոնղոլական բառերի իմաստն ավելի լայն է. Բուդաղովը տալիս է «օրենսդրություն, որոշում, թափափրական հրաման, օրենք. տուրք. արգելք, պատիժ, տուգանք» իմաստները. մոնղ. дзасаг-ը նշանակել է օրենք. պատիժ»։ Հետաքրքրական է նշել, որ թյուրքական բառը թաթարներից փոխ է առնվել նաև ռուսերենում ղՇԱԿ ձևով՝ «բնահարկ» իմաստով։

Այսպիսով, ասագ և ասախ (եսասխ) բառերը թյուրքական միևնույն բառի տարբերակներն են։

Ռաւիղ

V դարից սկսած դրականության մեջ լայնորեն դործածված աւրա բառը հանդիպում է նաև բաւեղ, բաւիլ գրություններով։ Բաւեղատրվում է որպես լայրերինթոս. ծածկված մութ տեղ՝ նկուղի նման»։ Սրանից կարելի է բաւեղակ բառը ևս բացատրվում է որպես «ծածկված մութ տեղ»²։ «Բաւեղի բաւեղում» բաւեղ-ը մեկնվում է «շինուած պատուածոյք», բաւիլ-ը՝ «քիւ տեղի»³։ Ըստ Հին հայկազյան բառգրքի, որի աղբյուրը հավանաբար նույնն է, այն նշանակում է «քիւ, քարանձաւ, պարսպապատ լեռն»։

Բաւի որևէ հավանական ստուգաբանություն չի առաջարկված։ Հյուսիս-արևելյան տյանի՝ Բաբելոն անունից հանելու փորձը չի կարելի լուրջ ընդունել։

Ամենից ավելի հավանական է ստուգաբանական կապը հուն. ρῶν (ռոն), բուն, ρῶν (ռոն) «պատկել ապրել, թաքնվել որջում», ρῶν (ռոն) «պարող. քառանգավուն թաքնվող բունի հետ ունի մարտի են հ. և. *bheu- լինել. ապրել» տրամադի *bhou- ձանդառնալին ձևից՝ *1 առան-

1 Բաւեղի բաւեղ, քննական բնագիրը, առաջաքանը և ձանթութությունները Հ. Մ. Ամալյանի. Երևան, 1975, էջ 325։

2 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, 12, Երևան, 1971, էջ 433 (հետադարձ ընթերցում է տողամիջում, համառոտված՝ ՀԱԲ)։

3 Բաւեղի բաւեղ, էջ 53։

...ական մասնիկով. հալերունի աղբյուր կարող էին հառաչել *bheṷ-ela (>բա-
ւել) կամ bheṷ-lā (>բաւիղ) ձևերից որևէ մեկը:

Եթե ճիշտ է է. Աղայանի կարծիքը բայ (բայոց) «որջ» բառի՝ այս նույն
արմատի *bheṷ- տարբերակից ծագելու մասին, ապա բայ(ոց) «որջ» և
բաւել (բաւիղ) «մոլոթ տեղ, քարանձավ, անելանելի վայր, լաբիրինթոս»,
այլև բոյն բառերը պատկանում են միևնույն արմատին:

Բղկել

Բարբառային այս բառը տարածված է Մշո բարբառի խոսվածքներում և
նշանակում է «պայթել, պատռվել, կտրվել»⁴: Ստուգաբանության որևէ փորձ չի
կատարվել: Ինչպես որ Սեբաստիայի բարբառի բղել «բռնել, գիրացնել» բառի
մեջ սկզբնական ա-ն ձայնեղացել է բ-ի մոտ⁵, այնպես էլ կարելի է ենթադ-
րել համատիպ ձայնեղացում բղկել-ի դ-ի համար և բա-(*բիա-) արմատը
բխեցնել հ.-հ. *bheid- «ճեղքել» արմատի ձայնդարձային *bhid- ձևից՝
*bhid->բիա-. կ-ն, անշուշտ հայերենում հավելված աճական է: Հ.-հ.
bheid-ի համար հմմտ. հ. հնդկ. bhidyatē «ճեղքվում է, ճղվում է, պա-
տրվում է, լատ. findo, fidi «ճեղքում եմ» և այլն:

Բուկ

Հին գրավոր տեքստերում այս բառը չի հանդիպում, բայց լայն տա-
րածում ունի բարբառներում: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1, էջ 482), հենվելով Նո-
րայր Բյուզանդացու բառարանի վրա, համարում է միջին հայերեն բառ:
Ունի «կոկորդ. պարանոց» իմաստը: Որևէ ստուգաբանություն չի առաջարկ-
ված: Հ. Աճառյանը նշում է պատահական նմանությունը լատ. bucca «այտ»
և գերմ. Backe (հ. վ. գերմ. backo) «այտ» բառերի հետ, որոնք ստուգա-
բանորեն չեն կարող կապվել հայերենի հետ:

Եթե բուն իմաստը համարենք «պարանոց» և նկատի առնենք, որ «պա-
րանոց» նշանակող բառերը հաճախ գալիս են ժոռել, թեքել, շուռ տալ՝ նշա-
նակող արմատներից (հմմտ. հ.-հ. *kʷei- «շուռ տալ, պտտել» արմատից
ծաղող լատ. collum «պարանոց», գոթ. hals «պարանոց. կոկորդ», այլև
ռուս. шея «պարանոց»՝ սերբախորվ. oшнјати «շուռ տալ» բայի կողքին),
ապա բուկ բառի աղբյուրը կարելի է համարել հ.-հ. *bheug- «թռել» ար-
մատի *bhug- ձայնդարձային ձևը. հմմտ. հ. հնդկ. bhujā «ծալք. թև»,
bhūja- «թև. կնճիթ», գոթ. blugan «թռել, թեքել» և այլն: Անհնար չէ կար-
ծել, որ «պարանոց» իմաստը բաղարկվել է *bheug- «ճաշակել, ուտել» բա-
լից՝ կող «կոկորդ» իմաստի հետ (հմմտ. կեր, կոկորդ՝ հ.-հ. *gʷer- «կլա-
նել» արմատից, որտեղից ավեստ. garəman «կոկորդ. պարանոց»):

*Գեզ

Այսպիսի բառ հայերենի գրավոր հուշարձաններում և բարբառներում
չի ավանդված, բայց կարելի է վերականգնել մի կողմից՝ հնդեվրոպական և
մյուս կողմից՝ ամենայն հավանականությամբ հայերենից փոխառյալ վրա-
ցադանյան ձևերի համեմատությամբ: Ինչպես հայտնի է, հնդեվրոպական
լեզուներում է *uegʰ- «չարժվել, գնալ, ճանապարհորդել» արմատը,

⁴ Ս. Ամասունի. Հայոց բառ ու բան. Վաղարշապատ, 1912, էջ 94:

⁵ Կ. Գարիկյան. Բառգիրք սեբաստահայ գավառակեղվի. Երևան, 1952, էջ
113,

որից կազմված են «ուղի, ճանապարհ» իմաստով բառեր. այս տարածված արմատը ներկայացված է հնդեվրոպական լեզվի գրեթե բոլոր հիմնական խմբերում, և պետք է ենթադրել, որ սկզբնապես եղել է նաև հայերենում, բայց կորսվել է: Վուղի. ճանապարհ» իմաստն առկա է ար. udhe «ճանապարհ. ճանապարհորդություն». գոթ. wîgs, հ. իսլ. vegr, հ. վ. գերմ. հ. անգլ. weg «ճանապարհ, ուղի» բառերում: Հայերեն բառի գոյությունը, ինչպես նշվեց, հաստատվում է վրացիչենով. մեգրելերենով և ճաներենով. որոնք ունեն համապատասխանաբար՝ gza, za, (n)gza «ուղի. ճանապարհ» բառերը. եթե ձ-ն արտացոլում է հայերենի հիմքակազմիչը. ապա հայերենի համար պետք է վերականգնել *զեզա սկզբնաձևը՝ *yeghā-ից:

Նշենք, որ հայերենում հ.-ն. *yeghā- արմատը պահպանվել է իրապական աղբյուրից փոխառված վազ, վազել բառերի միջնորդությամբ:

Դանդաղ

Գրական լեզվում և բարբառներում առկա «դանդաղաշարժ» իմաստի հետ միասին որոշ բարբառներում այս բառն ունի «անխելք, տխմար» իմաստը:

Եղած շատ ստուգաբանություններ (տե՛ս ՀԱԲ, 1, էջ 620—621) հեռու են ճշմարտանման լինելուց: Հ. Աճառյանը նշում է միայն բառի կրկնավոր լինելը՝ *դաղ արմատից: Է. Աղայանը բխեցնում է հ.-ն. *dheh- արմատից. որտեղից ծագում են նորվ. բրբռ. dalla, dulla «մանրաքայլ գնալ», հոլանդ. dallen «դանդաղ քայլել» (ավելի ճիշտ՝ «թրի գալ»), նորվ. drite «մանրաքայլ գնալ, ցատկոտելով գնալ»⁶ ձևերը:

Մենք, նախապես ընդունած լինելով է. Աղայանի ստուգաբանությունը՝ այժմ հնարավոր ենք համարում համեմատել հնդկ. (պալի) dhandha- «հիմար, տխմար, դանդաղաշարժ» բառի հետ, որ չունի հավաստի ստուգաբանություն⁷: Հայերեն և հնդկերեն բառի համար կարելի է վերականգնել *dhandh- նախաձևը և հայերենի համար ենթադրել *-lo- ածանց:

Երեւիլ

V դարի հուշարձաններում հանդիպող այս բառը բացատրվում է որպես «բույսերի մի հիվանդություն, քոս, ժանգ կամ ոչխր»: Մասնավորապես Ս. Մալխասյանցը բացատրում է որպես «բույսի ժանգ, հիվանդություն, որ առաջ է գալիս որոշ տեսակի մանր սնկերից (Rubigo)»⁸: Ինչպես ցույց է տալիս լատինական անունը, հիվանդության գլխավոր հատկանիշը կարմիր-ժանգագույն տեսքն է: Այստեղից բխում է երեւիլ բառի ծագման հնարավորությունը հ.-ն. *erebh- «մուգ-կարմիր, դարձնագույն» արմատից, որից ծագում են նաև զանազան բուսանուններ և թռչնանուններ:

Ջատիկ

Ջատիկ «զոհ. զատիկ, պասեք, հարության տոն. տոն» բառը մինչև այժմ չունի հավաստի ստուգաբանություն: Եթե մի կողմ թողնենք զանազան անհաջող համեմատությունները (հմտ. ՀԱԲ, 2¹, 1973, էջ 82—83),

⁶ Է. Աղայան. Բառարանական և ստուգաբանական հետազոտություններ. Երևան, 1974, էջ 58:

⁷ Հմտ. M. Mayrhofer. Kurzgefasstes etymologisches Wörterbuch des Altindischen. 2, Heidelberg, 1963, S. 90.

⁸ Ս. Մալխասյան. Հայերեն բացատրական բառարան. 1, Երևան, 1944, էջ 582:

ապա ուշադրության արժանի պիտի համարել զատանել բայի հետ կապելու փորձը (որպես սրանից ածանցված գոյական)։ Առարկություն է վերցնում միայն զատանել բայի բուն (տարածված) իմաստով բացատրելը ըստ «զատիկ, պասեր» իմաստի՝ «զատուցեալ յամենայն հեթանոսականաց և հրէականաց տօնից» (Շիրակացի), «բացատրի զատումն և ելումն իսրայէլացոց յնգիպտոսէ» (Ավետիքյան), «եղանակների զատվելու» ժամանակի հետ կապված սոն (Քննասեր)։ Իրականում զատիկ բառի նախնական իմաստն է «զոհ»։ Վոհարերության տոնահանդես. տոն», և «զատիկ, պասեր, հարության տոն» իմաստը մասնակի առում է՝ կապված քրիստոնեության տոնի հետ։

Ջատանել բառը, ինչպես հայտնի է, նշանակում է «բաժանել, անջրպետել» և ծագմամբ կապված է հատանել «կտրել, անջատել, հեռացնել» ճեղքել, պատռել» բայի հետ Վ- նախածանցով, որ սկզբնական առումով սաստակական արժեք է ունեցել (հմտ. հարկանել-զարկանել)։ Ջուգահեռ և առիկ բառը նշանակում է «(մեկ հատիկ) սերմ. ցորենի հատիկով պատրաստված ուտելիք»։ «Բաժանել, կտրատել, ճեղքել, պատռել, վերջացնել» սկզբնական իմաստներից դժվար չէ բխեցնել զատիկ-ի նախնական «զոհ» իմաստը, եթե մանավանդ նկատի առնենք հայ. տօն (տաւն) բառի իմաստային զարգացումը։ Վերջինս ծագում է հ.-և. *da- «բաժանել, կտրատել, պատռել» արմատի *p- աճականով *dāp- տարրերակից, որ ստացել է «զոհաճաշ, զոհախնջուր» իմաստը. հմտ. հ. հյուս. tain (*dap-no-) «զոհաբերվող կենդանի. զոհաճաշ, զոհախնջուր», լատ. claps «հանդիսավոր պաշտամունքային ճաշկերույթ. սնունդ, կերակուր. ճաշ, խնջույք» և այլն։

Թափ

Հին ժամանակներից հայ մատենագրության մեջ ավանդված և բարբառներում լայնորեն տարածված այս արմատը իմաստային հետաքրքիր զարգացում է ապրել։ Սկզբնական «հատակ, տակ, խորք» իմաստը վկայված է Աստվածաշնչում (հմտ. Թափ անցանել և Թափանցել ձևերի Թափ բաղադրիչը)։ Այս իմաստի հետ կապված են և սրանից ածանցված «պատյան», «թափ, ուժ», «պտույտ, շրջան, շրջում» (հմտ. Թափ առնուլ «ման գալ, շրջել», Թափառել), «թափում» (հմտ. Թափել), «փրկում, ազատում, դատարկում», «հափշտակում, կողոպուտ», «հասնելը», «պանդխտում» իմաստները։

Այս իմաստի համար առաջարկված ստուգաբանությունները (ՀԱԲ, 2, էջ 165) խոցելի են պատմական, հնչական կամ իմաստային նկատառումներով։

Թափ արմատի աղբյուրը կարող էր լինել հնդեվրոպական *stēb(h)-, *stēp- «սլոն, նեցուկ, արմատ. նեցուկ դնել, ամրացնել. ոռք դնել» արմատի *stēph- հնարավոր տարրերակի ձայնդարձային և առանց *s-ի ձևը՝ *tēph- > Թափ. *step-ի համար հմտ. հ. հնդկ. sthapayati «դնում է, հիմնադրում է», լիտվ. stepinti «ամրացնել», ռուս. строить ներքնամաս, թափ. բաղաձայնական մյուս տարրերակներով ձևերից հմտ. հ. վ. գերմ. stapf «ոտ ահեռք», slapfal, staffal «հիմք. քալ. աստիճան» և այլն։

Լոկ

V դարից սկսած մատենագրության մեջ գործածվող և բարբառներում տարածված այս բառը իմաստային շատ առումներ ունի. «զուրկ, դերձ. անմասն, աղատ, առանց. պարզ, հասարակ, սովորական. մերկ, տկուր. շունեցող, աղքատ. անհյուսիս, էական բաղադրիչներից զուրկ. միայ-

նակ. միայն, սոսկ: Սրանից են լոկիլ զգրկվել, լոկալոր չափավոր» բա-
 տերը: Գիտական ստուգաբանության որևէ լուրջ փորձ չի կատարվել:

Լոկ բառը ամենուրեք հավանականություններով ծագում է հ.-հ. **(s)lēg-*
թուլլ, մեղկ, հոգնած» արմատից, որի համար ենթադրվում է սկզբնական
 «ազատ թողնել, արձակել» իմաստը. *թուլլ* իմաստից *թուլամորթ*» օղա-
 կով առաջացել է *ցոփ*, վավաչոտ» իմաստը⁹. հմմտ. հուն. *λεῖψ* «հետ պա-
 հել, դադարեցնել. դադարել», *λεῖψος* «ենթա ընկած, փափուկ, բարակ, նուրբ»,
 լատ. *lingueō* *թուլլ*, հոգնած լինել. *թառամել*, հեղգ, անտարբեր լինել»,
 հ. իռլ. *lacc* *թուլլ*, մեղկ, ալարկոտ», մ. սա. գերմ. *թուլլ*, մեղկ,
 ալարկոտ, արձակ» հ. իռլ. *lakr* «վատ, չնչին», լատվ. *lēgēns* *թուլլ*, մեղկ»
 և այլն: Կասկածով այստեղ են հատկացվում *ռուս. пере-слег* «մանվածքի
 խոտան», սլովեն. *preslegast* «արատավոր, մաշված» բառերը, որոնք հայե-
 րեն բառի իմաստով հաստատվում են: Ակնհայտ է, որ հայերեն բառը սկզբը-
 նական «ազատ թողնել, արձակել» իմաստից առնցք է լուրահատուկ զար-
 քացում: Այս նույն արմատից են ծագում, իմաստային ալլ զարգացմամբ
 և ձայնգարձի ալլ աստիճաններով, լկնիլ «լրբանալ» լկտի, բրբո. լկալիլ,
 լկալիլ (**(s)lēg-*), լակ (*lam*), բրբո. լակոթիլ (**(s)lēg-*) բառերը¹⁰. իմաս-
 տի համար հմմտ. հուն. *λεῖψος* «վավաչոտ, ցանկասեր», *λεῖψυ* «լրբություն,
 ցովություն անել», չվեդ. *slōk, slāk* «թեթևամիտ կին»: Քանի որ արմատի
թուլլ, *թուլլ* կախված» հատկանիշով կարող են բնութագրվել նաև զանա-
 զան կենդանիներ (հմմտ. հուն. *λεῖψος* «*թուլլ* կախված ականջներով» «նա-
 պաստակ» հ. իռլ. *laki* «շերեփածուկ, շերեփուկ»), այս խմբին կարելի է
 հատկացնել նաև լոկ «լորտու» բառը:

Ինչ հավանական է լոկ բառի աղբյուրը համարել շուղնան. *loq* «նի-
 հար» բառի իրանական որևէ զուգահեռ:

Խալարիկ

Այս բառը հանդիպում է միայն Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն թղ-
 թոյն Պողոսի» աշխատության (թարգմանություն հունարենից) մեջ (երկու
 անգամ) և բացատրվում է որպես «մանկական խաղալիք»: Ստուգաբանու-
 թյան միակ փորձը պատկանում է Վ. Հացունուն, որ խալարիկ-ը կապում է
 հուն. *χαίρα* «շղթա» կամ *χαῖρος* «թուլլ, փափուկ» բառերի հետ¹¹. Հ.
 Աճառյանը (ՀԱԲ, 22, 1973, էջ 314) այս համեմատությունները իրավամբ
 զննում է կասկածելիների շարքում:

Խալարիկ բառի ծագման բանալին տալիս է խաղալիկ «մանկական խա-
 ղալիք» հոմանիշը, որ կազմված է խաղ արմատից: Երկու բառերի միջև
 ականհայտորեն առկա է ղ/լ հերթագայությունը (հմմտ. ջիղ/ջիլ, ծիլ/ծիլ և
 այլն). ենթադրելի է կամ ինչ-որ նախնական *խալա բառ, որից կազմվել
 է խալարիկ-ը, կամ խաղալիկ-ի *խալալիկ տարբերակի մեջ *l > r* տարեմա-
 նություն՝ առաջին լ-ի ազդեցության տակ:

Կախ

Գրական լեզվում և բարբառներում լայնորեն տարածված այս արմա-
 տը շունի հավաստի ստուգաբանություն: Տարբեր, գերազանցապես հնչյու-

⁹ J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch. I, Bern-Mun-
 chen, 1959, S. 99.

¹⁰ Հմմտ. Г. Б. Джаукян и др. Очерки по сравнительной лексикологии ар-
 мянского языка. Ереван, 1984, с. 103.

¹¹ Վ. Հացունի. Դաստիարակությունը հին հայոց քով. Վենետիկ, 1923, էջ 274:

նական, նկատառումներով անընդունելի են Ֆ. Մյուլլերի, Ս. Բուգգի նշած հնդեվրոպական ե Յ. Կարստի նշած ոչ-հնդեվրոպական զուգահեռները (տե՛ս ՀԱԲ, 2, էջ 486):

Անհնար է այս արմատի իրանական ծագումը, եթե այն կույ ունի շուղնան. kaxun բառի հետ, որ հանդիպում է kaxūn sltaw «կառչել, լռեցնել» կապակցությամբ մեջ¹²:

Մխիթար

V դարից սկսած գրական հուշարձաններում տարածված և բարբառների համար սովորական այս բառը հանդիպում է ինչպես առանձնակի գործածությամբ, այնպես էլ բաղադրություններում: Առանձնակի գործածված նշանակում է «մխիթարանք, սփոփանք. մխիթարող. մխիթարական» և առկա է մխիթար տալ, մխիթար մատուցանել բայական դարձվածներում: Նրանից են կազմված մխիթարել բայը և մխիթարական, մխիթարակից, անմխիթար անվանական ձևերը:

Հայագիտության մեջ ընդունված է Ն. Յա. Մառի ստուգաբանությունը¹³, ըստ որի մխիթար-ը ծագում է մի՛ խիթար «մի՛ վախենա, մի՛ մտահոգվիր» արգելական ձևից, ինչպես ֆաջալե(ել)-ը՝ ֆա՛ջ լեբ և վրաց. nugeši «մխիթարություն» բառը՝ nu gešiniš «մի՛ վախենա» ձևերից: Այս ստուգաբանությունն ընդունում է Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3, էջ 328—329) և որպես հավաստի բերվում մեր աշխատություններում¹⁴:

Ն. Յա. Մառի ստուգաբանության կասկածելի լինելու մասին առաջին անգամ նշել է Ա. Փերիխանյանը մեզ ուղղված անձնական նամակում՝ հավանական ողբյուր համարելով արամեերեն հիբ քաջալերել, հպարտացնել՝ արմատից կաղմված դերբայական որևէ ձև, բայց առանց այդ ձևը կոնկրետ մասնանշելու: Եվ իրոք, արամեերենում ընդարձակված հիմքերից դերբայներ են կազմվում ml-, mē-, ma- նախածանցով. հիշյալ արմատի սաստկական հիմքից պիտի ունենայինք mehattēr, իսկ պարզ հիմքի անորոշի համար՝ mihtar ձևը: Ինչպես տեսնում ենք, սրանցից ոչ մեկը հայերենի ձևը չի ունենում: Թերևս հնարավոր է հայերենի աղբյուրը համարել արամեերենի ասորական բարբառը, բայց այս դեպքում էլ իմաստային տարբերություն կա՝ mehattāra «հպարտ», mehattāra «հպարտացնել»¹⁵:

Այսպիսով, հարցը մնում է մինչև վերջ չլուծված:

Ձուղը

Գործածված է միայն Կլեոպատրա Սարաֆյանի «Բանալի գիտության» աշխատության մեջ (Սանկտ-Պետերբուրգ, 1788, էջ 64՝ ծուղալ ձևով) «խավիար, ձկնկիթ» իմաստով (ռուս. хкра): Եթե բացառենք Հ. Տաշյանի փորձը կապելու ձու բառի հետ, ուրիշ ստուգաբանություն չի առաջարկված:

Այստեղ ամենից առաջ ուշադրություն է գրավում նմանությունը ձուկն բառի հետ, որի -կն-ը մասնիկ է, և այս առումով ձու-ն կարող է կապվել

¹² Հմմտ. И. И. Зарубин. Шугнинские тексты и словарь. М.—Л., 1960.

¹³ «Записки Восточного отделения», 17, 1905, с. 30—31, հմմտ. նաև «Հանդես ամսօրյա», 21, 1907, էջ 17:

¹⁴ Հմմտ., օրինակ, Գ. Բ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախադրային մասնակաշրջան. Երևան, 1987, էջ 219:

¹⁵ C. Brockelmann. Lexicon syriacum, editio secunda, Gottlingae, 1908, p. 265b.

Համադրանքն է տալիս և տալիս բառերի ծագումը հ.-հ. *dergh- «բռնել» (?), արմատի *drg- (s)mo- և *dorgh- (s)mo- ձևերից: Հայերեն բառերին ձևով և իմաստով ամենից ավելի մոտ են կնիտական ձևերը՝ մ. իռլ. dremm, ն. իռլ. dream (*drg-smo-) «խումբ, բաղմոթյուն. ջոկատ», բրետ. dramm «խորձ, կապոյ», հմմտ. նաև հուն. δρεμν «բուռ. խուրձ», δραγμα «խորձ ևմ կապում, խորձում ևմ»:

Մղուկ(f)

Մղուկ(f)-ը հիշատակված է V դարի «Աշխարհացույցում» որպես Մեծ Հայքի Սյունիքի նահանգի տասներկու գավառներից մեկի անուն: Նրա սկզբնաձևը պահպանված է ուրարտական թագավոր Արգիշտի II-ի (714—685)՝ Սիսիանից 17 կմ հեռու գտնվող Թանահատի վանքի ավերակներում 1975 թ. հայտնաբերված արձանագրության մեջ որպես Տսլուգս¹⁸: Ստուգարանությունը որևէ փորձ հայտնի չէ: Նկատի ունենալով, որ ուրարտական ցեղերը այդ շրջանում շփման մեջ են եղել իրանական ցեղերի հետ և նրանցից փոխառություններ կատարել, անհնար չէ ենթադրել, որ Մղուկ < *Մուղուկ տեղանունը ծագում է արևելաիրանական աղբյուրից (սկյութերենից)՝ այդպիսի աղբյուր կարող էր լինել շուղաներեն culuq (cilúk տարբերակով) «ուղիղ, ցից, ուղղահայաց» բառի¹⁹ իրանական մի այլ ցեղակից:

Փիճխ, փիշխ

Հանդիպում է Ղ. Ալիշանի «Հայրուսակում» փիճի (Տ 3063) և փիշխ (Տ 3066) ձևերով²⁰: Առաջինի համար Ալիշանը գրում է. «Հիշված հին բժշկարանի մեջ՝ Զալուզայի հետ. թերևս տեսակ մը՝ փիճոյ բերքին հատուկ անուն է»։ Երկրորդի համար նշում է. «Հավանորեն նույն է փիճխ. հին բժշկր. հիշե, և մարդու ույժ տալու համար դեղոց կարգին դնե և Փիշխ կըռված: Նույն թվի և ուրիշ Բժշկարանի Փխճի հունա ըսածն: Ար. Փիշեֆ նշանակե տեսակ մի Բաղեղան. L. Hedera Helix»:

Հ. Աճառյանը «Հայրուսակի» հիման վրա մեկնում է «բուսական մի բերք» և կասկածի տակ է առնում արաբ. փիշեֆ-ի հետ համեմատությունը՝ նշելով չ-ի բացակայությունը արաբերենում:

Բառն ակնհայտորեն վրացական կերպարանք ունի, սակայն pičxi «ցախ» բառը իմաստով քիչ է համապատասխանում, իսկ pičvi «մի տեսակ մալրի» բառը հայերենի մեջ մտել է փիճի ձևով:

Քարտակառել

Այս հաղվադեպ բառը հանդիպում է նաև քարտառառել ձևով: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 4, էջ 564) բացատրում է «կացինով կամ տապարով ջարդել, սպանել» և ավելացնում. «Ձևով մին կամ մյուսը սխալ է. իսկ նշանակությունը երկուսը միանում են «կտրել» ընդհանուր իմաստով»:

Նկատի ունենալով, որ միջին պարսկերենում կա kartak «կտոր, հոլակտոր» բառը, որ ծագում է kart- «կտրել» հիմքից²¹, ճիշտ պետք է հա-

¹⁸ Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 236.

¹⁹ Հմմտ. А. Г. Периханян. Сасанидский судебник. Ереван, 1973, с. 493.

²⁰ Ղ. Ալիշան. Հայրուսակ կամ հայկական բուսարանություն. Վենետիկ, 1895, էջ 630: Հմմտ. А. Г. Периханян. Сасанидский судебник, с. 493.

մարել առաջին ձևը՝ փառակ-ը դրսևորվում որպես փոխառություն և ամբողջ բառը համարելով հայկական կազմություն՝ փառակ-ատել. վերջինս լիովին զուգահեռ է կտր-ատել բային:

Քուրդ

Բարբառներում լայնորեն տարածված այս բառը ունի «հին շորի անպետք կտոր, ցնցոտի. հին ու անպետք, վառ շինված. մաշված, հին. ուժասպառ, թույլ» իմաստները: Նոր հայկազյան բառգրքում քուրձ-ի և Գ. Ղափանցյանի կողմից ձևեր-ի հետ կապելու փորձերը Հ. Աճառյանը (ՀԱԲ, 4, էջ 596) իրավամբ դնում է անհավաստիների շարքում:

Անհավանական է, այն համեմատել հ. հնդկ. kṛdhū- «կարճացած. կրճատ. սուղ, պակասավոր, փոքր. հաշմ. աղավաղ», լիտվ. skur̃sti (skurd-) «կարիքավոր, չքավոր լինել», skur̃das «աղքատություն, չքավորություն. կարիք», skurdūs «աղքատ. սուղ. խեղճ. տխուր, խղճալի», skur̃dž-lus «աղքատ մարդ», skurda «հիվանդ. թույլ արարած, նյութն առաջին բառերի հետ (կասկածելի է հուն. σκῆδρος «պատանի» բառի կապը): Սրանց համար Յ. Պոկոնին վերականգնում է հ. հ. *sker-dh-, *skurdh- որպես *(s)ker- «կտրել» արմատի ածականով ձևեր (այս արմատից են հայ. քերթել, քերթել բառերը): Հայերենը ձևով ամենից սովորական է լիտվ. skur̃džius-ին, բայց առանց նախաձայն *s-ի (ինչպես հին հնդկերենը):

ЭТИМОЛОГИИ

Академик АНА Г. Б. ДЖЛУКЯН

Резюме

В статье дается этимология следующих армянских слов: asag «штраф, пеня» (из тюркского источника, откуда также арм. (i)ṛax «зак и»), bawil/bawel «лабиринт; закрытое темное место» (и.-е. *bhaṛila, *bhaṛela от *bhen-; ср. греч. φαλίσκος «нора», диал. bōkel «взрываться, разрываться» (*ht-k-el от и.-е. *bheid-/bhild-, «колоть, раскатывать, рассекасть»), buk «горло; шея» (от и.-е. *bheug-/bhug- «гнуть, сгибать»), *gez «дорога, путь» (<*geza<и.-е. *ǵeg'hā из армянского; заимствованы груз. gza, мегр. za, чан. (n)gza «дорога, путь»), dandał «медленный, медлительный, неповоротливый; глупый» (и.-е.? Ср. др.-инд. dhānd-ha- «глухой неповоротливый»), ɛrewil «ржавчина на поверхности растений» (от и.-е. *erebh- «темнокрасный, коричневый»), zatik «жертва; асха; праздник» (от zat-an-el «отделять»), tsarc «дно, низ, глубина; размах; сбрасывание, высыпание» (<и.-е. *tərh при *step/b(h)- «поднимать; устанавливать; ступать»), lok «линейный. свободный; простой; отдельный. единый; только» (<и.-е. *log- от *(s)leg- «отпускать; слабый?»), xalarik «игрушка» (связано с чередованием l/ʃ с xalarik «игрушка»), kaх «висячий» (из иранского источника?), xixil'ar «утешение; утешитель» (из арабского источника; ср. hir «отряпать; драть гордым»), ju-lu «икра» (*ǵ'hū-lebh- от ǵ-hu- «рыба» и *lebh- «прыжок дитя?»), yağ-č'il «прилипать» (связано с hağ-n-el «сшивать. пришивать. приспособлять»), y-orsays «лежачий» (*ors-<и.-е. *orok'- «ребро»), tarm/torm «группа» (<и.-е. *dǵh-mo/*dorg-h-mo; ср. ср.-ирл. dremm «группа, толпа»), Cṭuk- (топоним от *suluko- из иранского источника, rēlx/rēscx (название растения—из груз.), k'artakatel «резать; вырезать, перерезать» (k'artak- из ср.-перс. kartak «кусочек» от kart- «резать»), k'urj «рубище, лохмотья, отрепье» (от и.-е. *(s)ker- «резать»).